**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ**
**ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 29-Ա

## Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին

Որոշում է՝

Հաստատել նիստի օրակարգը

1.Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վարձավճարների մասին

2.Ն.Ծաղկավան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

3.Ն.Ծաղկավան համայնքի 2017թ. տեղական բյուջեի քննարկում և հաստատում

4.Ն.Ծաղկավան համայնքի 2016-2021թթ. համալիր զարգացման հնգամյա ծրագրի հաստատում

5.Ն.Ծաղկավան համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման 0,04 հա մակերեսով հողամասը մրցույթային կարգով բնակելի կառուցապատման տրամադրելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

4. ՅՈՒԼՅԱՆ ԴԱՎԻԹ

5. ՌԵՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
## ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 30-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով

Որոշում է՝

1.ՀՀ <<Հողային օրենսգրքի>>81-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն հաստատել համայնքի սեփականության հողամասերի վարձավճարների չափը՝ 1հա հաշվով

1)2-րդ և 3-րդ կարգի վարելահողեր – 10 000 դրամ

Ընդամենը 14հա x 10 000 = 140 000 դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐՋՊԵՏ
4. ՅՈՒԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ
5. ՌԵՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ**
**ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 31-Ա

## Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ մարտի 10-ի թիվ 234-Ն որոշումը և ղեկավարվելով <<Տեղականինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով համայնքի ավագանին

Որոշում է՝

1.Չեղյալ համարել Ն.Ծաղկավան համյնքի ավագանու 08.11.2016թ թիվ 26-Ա որոշումը:

2.Հաստատել Ն.Ծաղկավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ
4. ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ
5. ՌԵՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ**

Հավելված

Ն.Ծաղկավան համայնքի ավագանու

23/11/2016թ 31-Ա որոշման

Ն.Ծաղկավանի համայնքապետարանի

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը

և պաշտոնային դրույքաչափերը

1 Աշխատակիցների թվաքանակը-6

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամ /

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափերը |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 195.000 |

Հայեցողական պաշտոններ

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 107.000 |

Համայնքային ծառայողներ

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 112.000 |
| 4 | Առաջատար մասնագետ-ֆինանսիստ | 1 | 109.000 |
| 5 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 82.903 |

Տեխ.սպասարկման անձնակազմ

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Հավաքարար | 1 | 72.752 |

Ն.Ծաղկավան համայնքի ղեկավար /Ն.Աթաբեկյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 32-Ն

## Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ և ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին

Որոշեց՝

1.Հաստատել Ն.Ծաղկավան համայնքի 2017թվականի տեղական բյուջեն՝

1)Եկամուտների գծով 11265,4

2)Ծախսերի գծով 12503,5

3)Դեֆիցիտ 1238,1

2.Հաստատել համայնքի 2017թ բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ /հավելված 1/

3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ /հավելված 2/

4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ /հավելված 3 /

5.Սահմանել,որ

ա)Ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝պահպանելով ծախսերի համամասնությունները

բ)Թույլատրել համայնքի ղեկավարին գանձապետական հաշվի 2016թ տարեվերջյան ազատ մնացորդն ինքնուրույն ներառել 2017թ բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջող ֆինանսավորման համար:

գ)Ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման նախատեսված հոդվածների միջև <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ
4. ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ
5. ՌԵՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 33-Ն

### Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 53-րդ հոդվածով համայնքի ավագանին

Որոշում է՝

1.Հաստատել Ն.Ծաղկավան համայնքի 2017-2021թթ հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն /հավելված 1/:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ
4. ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ
5. ՌԵՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 34-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,04 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ /ՎԿԱՅԱԿԱՆ N18112016-11-0017/ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>>67,68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ, հաշվի առնելով, որ նշված հողամաս ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ

Որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման 0,04 հա մակերեսով հողամասը /ծածկագիր 11-037-0020-033/ հողամասը /վկայականի համարը 18112016-11-0017/ օտարելու:

2.Աճուրդի մեկնարկային գին սահմանել 1քմ 150 դրամ:

3.Աճուրդի քայլ սահմանել մեկնարկային գնի 5%-ը:

4.Մասնակցության վճար սահմանել 1000 դրամ:

5.Աճուրդի պայմանների վերաբերյալ տալ հայտարարություն:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԵԴԳԱՐ
2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ
4. ՅՈՒԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ
5. ՌԵՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝　　　　ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ